

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Խմբագրությունը գրվում են միայն խմբագրատան մեջ:

(Պատրաստողը պիտի ունենա)
Тифлисс. Редакция „Мусака“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Դաշի կիրակի և առի օրերին):

Հայտարարութիւնը ընդունվում է ամեն շաբաթ:

(Հայտարարութիւնների համար վճարում են
խաւարանները բառին 2 կոպեկ):

ՐԱՍՏԱՅԻՆՈՒԹԻՒՆ

«Русская Рѣчь» ամսագրի յօդուածը: — Ներքին տեսութիւն: Նամակ Ախալցխայից: Նամակ Երևանից: Նամակ Երասխայից: Նամակ Երզնայից: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Գեղարվեստ: «Голосъ» լրագրի թղթակցութիւնը: Յունաստան: — Յայտարարութիւններ: — Բանասիրական: Ստանդարտ: ձեռնարկներ:

«РУССКАЯ РѢЧЬ» ԱՄՍԱԳՐԻ ՅՈՂՈՒԹԵՐ

Այդ ամսագրի օգոստոսի տետրակում կարգացնէր մի յօդուած «Внутреннее состояние Турции» վերնագրով:

Թիւրքիայի ներքին ժամանակակից դրութիւնը նկարագրելով, հեղինակը մեծ ուշադրութիւն է դարձնում Թիւրքաց Հայաստանի վրա: Նա բերում է իր յօդուածի մէջ Աւանի հայերի տղերսացիները, ցոյց է տալիս թւանշաններով թէ հայերը Հայաստանի չորս վիլայէթներում, որոնց համար ինքնավարութիւն է պահանջվում, աւելի բազմաթիւ են քան թէ նոյն վի-

լայէթների միւս ազգաբնակչութիւնները, նկարագրում է Թիւրքաց հայերի թշուառ դրութիւնը, նրանց հարստահարելու բիրդաւազակների և Թիւրք պաշտօնեաների ձեռքով, վերջապէս արտաւայում է «Голосъ» լրագրից Կ. Պոլսի ամբողջ նամակագրութիւնները:

Հեղինակը խոսում է այն հասկանալիութեան մասին, որ Թիւրքաց պետութիւնը կարողութիւն չունի իր ինքնավարութիւնը պահպանելու: Այնուհետեւ, Թիւրքիայում, ասում է հեղինակը, մենք հանդիպում ենք մի ազգութեան, հայոց ազգութեան, որ իր մտաւոր և տնտեսական զարգացմամբ այնքան նշանաւոր է, որ մեծ ապագայ է խոստանում:

Այդ ազգի մտաւոր և բարոյական կենտրոնները երեք են, շատ

բունակում է յօդուածագիրը՝ Կ. Պոլսի, Էջմիածին և Թիֆլիս: Թէև Թիւրքիան կարող է իր պետական կեանքը սահմանափակել Փոքր-Ասիայում և Հայաստանում, բայց, աւելացնում է ռուս ամսագիրը, մեզ ուսնենք համար դա մի որ և է վտանգ է կարող ներկայացնել, որովհետեւ մենք ունենք մեր ձեռքում մի զօրեղ զործիր Թիւրքաց ոյժի դէմ: այդ զօրեղ զործիրը՝ հայոց ազգն է, որի ազգային կեանքը և մտաւոր մակերևոյթը մենք ամեն միջոցներով պէտք է աշխատենք բարձրացնել: Այդ մենք կարող ենք անել, շարունակում է նա, խմբելով Մարտիկասում, մասնաւոր Թիֆլիսում հայոց ինտելիգենցիան և բարձրացնելով զրպրոցական կեանքի և լուսաւորութեան միջոցով այդ ինտելիգենցիայի մտաւոր մակերևոյթը:

Իսկ դուրս համար, վերջացնում է իր յօդուածը «Русская Рѣчь» ամսագրի հեղինակը, հարկաւոր է

շտապել Թիֆլիսի համալսարանի հիմնարկութեամբ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԿ ԱԽԱԼՏԻՍԻՑԻՑ

23-ին օգոստոսի

Ախալցխայի խոյուանէր և անմարան հայկաթօլիկ ժողովրդի վարքի, բարքի և զանազան կենտրոնի վրա շատ քիչ անգամ խօսվում է լրագրութեան մէջ: Այդ պատճառով ես, որպէս հայկաթօլիկ, պարտք եմ համարում իմ թշուառ ազգակիցներին համոզել, որ ունենան դէպի իրանց արիւնակից հայ լուսաւորչական եղբայրները ունի և միտքանութիւն, որոնք նոյա մէջ շատ քիչ են գտնվում:

Ձեռնարկով, որ նրանք ամեն տեղ իրանց ազգանունը ստորագրելիս, ամենից առաջ գրում են հայկաթօլիկ բառը, բայց դարձեալ անգագ են դէպի իրանց ազգութիւնը, և ամենին չեն ճանաչում իրանց արիւնակից եղբայրներին:

Մի քանի ժամանակ առաջ տեղիս հայկաթօլիկներին մէկը սաստիկ զգլած կաթօլիկ հոգևորականներից, իր ամբողջ ընտանիքով ընդունեց լուսաւորչականութիւն: Եւ ահա ինչ եմ իմանում ժողովրդի բերանից: Լսում եմ այն, որ իբրեւ հայ, իբրեւ քրիստոնեայ ոչ ոք իրաւունք չունի ասելու, թէ «Լաւ է մասնատական կրօնը ընդունել քան թէ լուսաւորչականը»: Ասացէ՛ք, կաթօլիկ հայեր, միթէ մասնատականութիւնը զուր գերադաշնու է ք լուսաւորչականութիւնին, միթէ կարելի է աւել արագիս դառն խօսքեր, միթէ կարելի է

չորքը տարածվի հասարակաց ակնկալութեան համամասն:

Ներկայումս այս տղերք աւելորդ կը լինէին, եթէ մեզանում ընդունված լինէր արտասահմանեան հասարակութիւնների կարգը և սովորութիւնը, որով տնտեսական, հասարակական, կրօնական, վաճառականական, դատարարական և այլն կարգերի մէջ պահանջներ լինանորդութիւնները օրէնսդրին ներկայացաւուց առաջ, հասարակութեան, մասնագէտների և ազգագրութեան կողմից ամենակողմանի քննութեան առարկայ են լինում *):

Բայց որովհետեւ մեր ձեռնարկանների վիճակի վերանորոգութիւնը նախադրվում է ժամանակի նախապէս հարցված չէր, թէ նոր փոփոխութիւնները ինչ տեսակ հարցեր պիտի լուծեն կամ ինչտեսակ պահանջներին բաւականութիւն տան—այս պատճառով մամուլի պարտքն է լուսաւորել այս խնդիրը և տեսնել թէ ինչ տեսակ ապագայի անկնկալութիւնը կարող ենք ունենալ:

Բժի-Պրոմիս:

Արամանց

*) Այս վիճակի մէջ մի միլիոնական եւրոյի նկատմամբ այս օրերս, թիւրքի նահանգի կառավարչը գնեաւ Սփրաւոնովը, ինչպէս հաղորդում է «Голосъ» լրագիրը, որին յանձնած էր Կովկասեան հանքային վերականգնողական օրդնոցութիւնը ներկայ պահանջների համեմատ, այս օրերս իր եռամսայ քննութեան արդարաբար հասարակական դատի և քննադատութեան ենթարկելով մի տեսակով՝ որի շտապարանով հրաւիրում է մասնագէտներին ցոյց տալ այդ աշխատութեան թերութիւնը խոստովանելով որ այսպիսի ծանրակշիւ խնդրի լուծումը մի մարդու կարողութիւնից վեր է, թէև այդ մարդու առաջ ճանապարհները բաց են լինէին: Արամանց օրինակ հետեւողութեան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱԼԱՆԻ ԶԿՆՈՐՈՒԹԻԱՆ ԽՆԴԻՐ

Կովկասի ձկնորսութեան խնդիրը մեր տնտեսական կեանքի և արքունիքի զանազանի համար այնքան կարեւոր նշանակութիւն ունի, որ հազիւ թէ ներքին է մեր պարբերական անկախ օրագրականութեան, եթէ այս խնդիրը մինչև ցայժմ անուշադիր է թողած: Որքան կը յիշեմ «Մշակ» իր իննամսայ ընթացքում ոչ մի երևոյթ, ոչ մի խնդիր, որ կը վերաբերէին մեր երկրի ազգային, քաղաքական, տնտեսական, մանաւանդ տնտեսական և այլն և այլն կենաց, բարքի թող արած չէ, որ բազմակողմանի և հիմնուոր քննութեան առարկայ արած չը լինի: Տարաբաղդարար այս խնդիրը թողնված է անուշադիր և ներկայումս, երբ բարձրագույն մարտի 18-ին հաստատված նոր կանոնադրութիւնը մեծ փոփոխութիւններ պիտի մտցնէ Կովկասի ձկնորսութեան վիճակի մէջ և ոչնչացնէ, կարծիւմ է, մեղմանաւորութեան գործիքները, որ մի ծանր քարի նման ծանրացած էր հասարակ և խեղճ ժողովրդի վրէ վրա:

Ծածուկ բան չէ, որ ձկնորսութեան գործը և սուսուորը իսկզբանէ բացառապէս հայերի ձեռք գտնվելով, մի քանի բաղդաւորների ձեռքում մեծ հարստութիւն գիղելու պատճառ է եղած: Նոյնպէս ծածուկ բան չէ, որ կապալաւորութեամբ այս գործը մեղմանաւորութիւն չլինելով արուեստագէտ ձկնորդին ապրանքի գինը այնքան բարձրացած է վերջին ժամանակներում, որ հազիւ թէ

այժմ ձկնորդներ կարելի է հասարակ ժողովրդի կենսական գլխաւոր պաշարների շարքում դնել, ինչպէս առաջ էր: ձկնորսութեան՝ որ կենսական գլխաւոր պաշարների թանկանալու բնական պատճառը այս գործի մէջ եւ իր դերը կատարում է պահանջի և առաջարկութեան խտտարարոյ և անուշադիր օրէնքը և այստեղ իր ներգործութիւնը ունի: այսուամենայնիւ անկասկած կարելի է ընդունել, որ սուսուորի կանոնաւոր ընթացքի մէջ ընկած կանոնաւորների հետ մեծ ձեռքով տուին արհեստական պատճառները՝ եթէ այն սուսուորը մեղմանաւորութեան արդիւնք է:

Ձեռնարկով որ մեր ձկնորսութիւնը և նրա առուտուրը կենսական հարցի կարեւորութիւն ունի մինչև այժմ մեր հասարակութեան, այն, կարող եմ ասել և կառավարութեան համար, մի անձանթ, թանկ խաւարով ծածկւած մի լարելին է, որի մէջ կարող էին աղաղ և համարձակ մանդալայն բաղդաւորները, որոնց վրա տեղացի էր ձկնորսային կապալաւորութեան (ОТКУПЪ) և մեղմանաւորութեան պարտաւորացելէ մանանի: Կրամաւոր աղաների շարքում մտնող վաճառականի ցնորքն էր Սալանի կապալաւոր լինել, իսկ Բաղդալանի տղոր և բոքիկ աշակերտի երազն էր Սալանում պրիկաչիկ (գործակաւար) դառնալ...

Զարմանալի ոչինչ չը կայ. — թէ մեր և թէ միւսը ուղղադատ էին իրանց ցանկութեան մէջ: Սա մի կտոր դեմակ էր, որի նմանը հազիւ թէ Կովկասում ուրիշ տեղ կը գտնվի...

Մի խոցով թէև այս գործի հետ կապված էին հաղորդարների կենսական շահերը՝ երկրի տնտեսական վիճակի գլխաւոր կարիքներից մէկը և արքունի գանձարանի օգուտը: այսու ամենայնիւ այս գործը տանաւոր տարիների ընթացքում ծառայել է անհաւանքի, մի քանի դրամաւորների և վարչական վերին շրջանում թափառող մի քանի պալանների զբոսանքին...

Ի հարկէ՝ աւելորդ է ասել, թէ ինչպէս այս նշանաւոր կապալաւորութեան ղեկավարները կառավարում և տնտեսավարում էին այս գործը, ինչ ճանապարհ և ինչ նախք էին գործ դնում, որ նը-

րանց դրած նշանաւոր գումարը ոչ թէ ապարդիւն, այլ միւրի փոխադէն երկուր երեք վաստակի... Բաւական է մտաբերել թէ ինչ ձև և ինչ կարող էին գլխաւոր դրամաւորների առուտուրական գործերի մէջ և ինչ տեսակ տնտեսավարութիւն—այն ժամանակ կարող ենք ասել, որ այս գործի մէջ եւ մի առանձին զարտուգութիւն նկատելի չը պէտք է լինէր դէպի եւրոպական տնտեսավարութիւնը:

Ներկայումս այս փառաւոր կապալաւորութեան օրնաւոր հասել է: մնացել է մի ամիս, որ նոր կանոնադրութիւնը գործադրվի մեր ձկնորսարաններում: Նոր կարգադրութեան հիմամբ առաջընդունել արդէն վերջացած են և մասնաւորապէս յայտնի է, թէ որ մասը ում է վիճակված և ինչ գնում:

Եթէ Կովկասի ձկնորսութեան խնդիրը մեր երկրի տնտեսական կեանքի գլխաւորներից մէկը չը լինէր, եթէ նոր հաստատված կանոնադրութիւնը այդ խնդրի հետ սերտ կապակցութիւններ չունենար, բաղդաւորական, միւր միւսին հակառակ չահրով հարցեր չառաջարկէր և մեծամեծ բարեաց և անկնկալութեան առիթ չը լինէր, — հարկաւ որա վրա առանձին ուշադրութիւն չը դարձնելը օտարտի երկուր համարելու տեղիք չէր լինի: Բայց որովհետեւ կարծիւմ է, որ նոր կանոնադրութիւնը գոհունակ կերպով վճարով մեր տնտեսական գլխաւոր և կենսական հարցերից մէկը, ենթադրում է կապալաւորութիւնի և մեղմանաւորութիւնից բրդաւոր վառթար հետեւողների և չարաց առաջնաւոր և հաւատարմութիւն լաւանի շտաբի մէջ մեր երկրի հարստութիւններից մէկը և արժանացնել ձկնորդին նիւթերի գինը, — այս իսկ պատճառով հետաքրքրական էր այդ կանոնադրութեան էական տարբեր քննութեան ենթարկել և տեսնել թէ օրէնսդրութեան ցանկութիւնը ինչ չափով համապատասխան է իրական կեանքի պահանջներին, որքան հաստատ և հիմնական իրատեսի վրա հիմնված են այդ կանոնադրութեան սկզբունքները և վերջապէս ինչ էական փոփոխութիւններ կատարված են, որ հնի յիշատակը նոյովի և նորի

մէկ մօրից ծնած երկու եղբայր՝ մէկը միւսին թշնամութիւն անէ, ատէ, հայհոյէ և բամբասէ նրա ցեղը. չէ որ նա ինքն իրան թշնամութիւն արած, հայհոյած և բամբասած կը լինի. Այդպէս է պատուիրում մեզ մեր սուրբ կրօնքը:

Բայց ես ժողովրդին ամենին մեղաւոր չեմ համարում, որովհետեւ բոլոր վատ և սխալ գաղափարները մեր պատեւի հայր սուրբերն են խեղճ ժողովրդի, մանաւանդ ծերերի և կանանց մէջ տարածել տեսելով զայն ինչ բան է, ո՞վ է, հայն և կաթողիկէ մէջ մեծ սարեր կան, մանաւանդ, որ մեր սրբազան փափը անիծել է նոցա այս խօսքով, թէ Վերաբայ եկեղեցի չի փրկութիւն և սոցա նման յիմարացոյցի խօսքեր:

Ես կամենում եմ մի երկու խօսք ասել այս տեղի հայ-կաթողիկէներին անտէր և անպտուղ դըպրոցի ներկայ և անցեալ անմիտութար դրութեան վրա:

Ութ կամ ինը տարի առաջ, ես էլ իբրեւ աշակերտ գնում էի այս դպրոցը ուսում սովորելու. Ախսն իմ կորցրած ժամանակ...

Գալոցը բաղկացած էր երկու դաստաներից, որոնցից մէկը հին և փքը էր, որի մէջ սովորում էինք խոյր լեզուն, առաւօտեան 9-ը ժամից մինչև 1-ը այն էլ առանց փոփոխութեան: Հայոց լեզուի ուսուցիչը մի ծերունի տիրացու էր, որին կոչում էին տիրացու Նունիկ, որը երբ ներս էր մտնում դասատունը, բոլոր աշակերտներս էլ ահի և դողի մէջ էինք ընկնում, որովհետեւ նա պահում էր ամեն ժամանակ իր վերաբերման տակ այն ահաւոր ծիպաբլ, որի վրա մեր ձեռքերի, ոտների արխից տեղ տեղ կարմիր բծեր էին նշմարվում: Այդ տիրացու Նունիկը ամեն օր դասատուններս մտնելիս հրամայում էր մեզանից մի քանիսին գնա նրա տունը ջուր բերելու կամ թէ փայտ կտրելու... Իսկ մնացածներս հրամայում էր կարգաւ բարձր ձայնով, այնպէս որ ձայներս մինչև հեռաւոր փողոցներ լսելի էին լինում:

Արդէն ընթերցողը հասկանում է թէ ինչ վիճակի մէջ էր այս դպրոցի հայոց լեզուն, իսկ ինչ որ վերաբերում է առաւօտ լեզուին, համեմատելով հայոց լեզուի հետ, շատ գերազանց էր, սրովհետեւ դասատունն էր, ուսուցիչն էլ նոր էին: Մենք այդ նոր դասատուն մէջ սովորում էինք միայն հասարակ կարգաւ և գրել, իսկ խօսել, ոչ մի բան:

Ինչ և իցէ. չեմ ուզում երկար խօսել անցեալի վրա, միտք բերելով հայի առածը, թէ «երէկվայ մեռելը երէկ թողեցին», այսօրվայ մեռելի ճարը գտնենք: Հիմա մի քիչ էլ ներկայի վրա խօսենք: Ներկայումս հայ-կաթողիկէները, ինչպէս երեսուն է, փոխանակ առաջ գնալու, փոխանակ ուսման սէրը աւելացնելու յետ են գնում:

Անցեալ տարիներում, ինչպէս վերը յիշեցի, դպրոցը բաղկացած էր երկու դասատուններից՝ նոր և հին: Ներկայումս մնացել է մէկ դասատուն, այն էլ հնաշէնը: Կարծեմ հայ-կաթողիկէները ամենին տեղիք չունենան յիշեալ դպրոցի նորաչէն և մեծ դասատունը յատկացնել տեղային քահանայ հայր Ս. Ե. ընտանեկան համար: Ասեմք թէ ժողովուրդը կար էր, լիար էր, չը հասկացաւ և դասատունը բնակարանի փոխեց, բայց միթէ պատեւի հարկ չէ խղճում իր հօգուտ դպրոցի աշակերտներին, որոնք պարագ պատում են սրիկաների նման: Ինչ անեն խեղճ տղայոց հայրերը. ուսում նարանում տեղ չը կա, որ տղայը գնան և նստեն: Իսկ եթէ տղաներին հայր-ուսուցիչականների ուսումնարանը տալու լինեն, պատուելին չի թողնի տեսելով. ետդայը կրօնից կը հնազանդ: Հազիւ այս տարի ժողովրդի աչքը բացվեցաւ, ուզում են դարձեալ ձեռք բերել նորաչէն դասատունը, որ վաղուց տէր հօր կեցութեան համար բնակարան էր դարձել, բայց պատուելի նայը չէ ուզում տեղափոխվել, ասելով. «Ինչ պէտք է երկու դասատուն, մեր ժողովուրդը քիչ է, մէկ դասատունով էլ տեղաչքը բաւականանում են, թող քիչ էլ նեղվածք լինի»:

Յոյս ունեմ, որ հայ-կաթողիկէները չեն խաբւի պատեւի խօսքերից, կաշխատեն ձեռք բերել իրանց նորաչէն դասատունը, որովհետեւ այդ ժողովրդին է պատկանում, ոչ թէ պատեւելուն: Յոյս ունեմ, որ այսուհետեւ կը վարձեն լաւ ուսուցիչներ, որ իրանց տղայքը կարողանան բարոյապէս կրթվել, զարգանալ և կանոնաւոր ուսում ստանալ, և ոչ թէ տիրացու Նունիկի պէս միայն աղօթքներ սովորել:

Հայ-կաթողիկ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Օգոստոսի 20

Սորանից քանի մի ժամանակ առաջ մեր լրագիրները տարբերակ

գիրները տարածել էին լուր, իբր թէ հանգուցեալ Գաբրիէլ արքեպիսկոպոս Ավագեանի թղթերն, ընկնելով էջմիածնայ միաբանութեան ձեռք՝ այրուել են: Այս լուրը, ինչ ասել կուզէ, ամեն բարեմիտ հայի մեծ վիշտ պատճառեց, նախ որ՝ հայոց գրականութիւնը և ժամանակակից պատմութիւնը գրկվել էին գեղեցիկ նիւթերից և աղբիւրներից, և երկրորդ որ՝ մեր օրերումն գտնվում են մարդիկ, որոնք իրանց անձնական կրքերը յաջեցնելու համար, գործածում են այնպիսի նմանքներ (առեթուղափէ), որոնք ներքի էին միայն միջնադարեան անգութ բարբարոսներին...

Այո, այդ վերոյիշեալ լուրը, առանց բացառութեան, ամեն բարեմիտ հայի մեծ վիշտ պատճառեց: Ամսոյ 15—19 գտնվելով էջմիածնայ մէջ, ես հետաքրքրվեցաւ տեղեկանալու արդեօք ճշմարիտ էր այդ թախարիկ լուրը, թէ դա մի գրագրական բառ էր, բայց թողած ո՞վ գիտէ ինչ խորամանկ նպատակով էջմիածնայ մէջ որքան և անձինք կային (ամենքն էլ խօ կաշառված չէին), գրեթէ ամենքին հարցուցի այդ մտացածին վշտի անցքի մասին, և ամենի բերանից լսեցի որ նրանք մինչև անգամ դրա նման բան լսած չեն, ուր միայն թէ՛ տեսած լինէին: Նոյնը ինձ ասացին՝ ինքը Վահագն փառը, սինօղի ակնածիկ անդալը, Վահրամ Կարկոպոս Մանկունին, և այլք:

Դրանով ևս ես չը բաւականացայ, ցանկացաւ տեսնել հանգուցեալից մնացած թղթերն: Յիշեալ թղթերը պահված էին վեհաբանի սենեակներէն մինի մէջ, որի դռները ամուր կաշուներով կաշված էին և ուր ոչ ոք մուտք չունէր: Ի պատիւ իմ (չը գիտեմ ինչով էի արժանացած) այդ փակված դռները բացվեցան և ես աչքովս տեսայ այն թղթերի գէղը, որի կտրտեան համար լալիս և ողբում են բարեմիտ հայերը:

Ես, ներքոյ ստորագրեալս, վկայում եմ, որ հանգուցեալ Գաբրիէլ արքեպիսկոպոս Ավագեանի թղթերը, մինչև անգամ փղթիկ, պատահաւոր թղթի վրա գրած տողերը, յիշատեարներն (ПАМЯТНАЯ ВЕЩЬКА), տեսարկներ, և այլն, անկորուստ կան ցուցեցի անցուցան և համարի ձգեմ:

Աչքովս տեսայ և ձեռքովս չափեցի: 1) Աստուածաբանութիւն տեսական, մի քանի բաղաձայնութիւն, in folio տեսարկներ, օտարի ձեռքով գրած, բայց հանգուցեալի գրչով ձեղղած շատ տեղ: 2) Հ-գերանութիւն. երեք հատ in quarto տեսարկներ, Թեոփիլայում աշակերտի ձեռքով պարզագրած: 3) Սղագրութիւն (Стенография). 4) Վարդապետարան, միջակ: 5) Մի անգիրն ժողովածու նամակներով: 6) Բաւականին մեծ ժողովածու օրագրական և լրագրական յօդուածներով:

Հասարակաց ուղարկութիւնը դարձնում եմ նամակների ժողովածուի վրա: Այստեղ կային անհամար նամակներ զանազան անձինքէ գրած, որոց գրողը ոչ միայն կենդանի են, այլ և այս րօպէս բնակում են էջմիածնայ մէջ: Նամակների բովանդակութիւնն է դանաղան ամբաստանութիւնը այնպիսի անձանց՝ ղէմ, որոց գլխաւոր չափն էր անհեռացնել յիշեալ նամակները, բայց նոքա այդ բանը արած չեն... նշանակում է, որ այդ իզուր ամբաստանված անձինք առաւել արդարաւիտ և յիտակ են հանդիսացել, քան որքան ժողովուրդը կարծել է և կարծում է նրանց մասին:

Ուրեմն ամեն բարեմիտ մարդ պարտաւոր է աշնադիւ գործ համարել այն զրպարտութիւնը, որի (հանգուցեալ Գաբրիէլ Կարկոպոսի թղթերու ալբիւմ) պատճառաւ բամբասվել են խեղճ էջմիածինը և նրա մէջիլ բնակողքը:

Գրիգոր Տաթևացի և Ներսէս Խուդավերդեան եպիսկոպոսները իմ մտերիմ բարեկամներն են. ես նոցա խօսքին հաւատում եմ. Շատ կարելի է որ նրանք մի ուրիշ մարդումէ թաքցնէին. բայց առաւել քան թէ կասկածելի է, որ նրանք ինձ չը յայտնէին գործի իսկութիւնը: Գրիգոր և Տաթևացի վերջին խօսքերը այս էին՝ «Աստուծովս երդնում եմ, որ Գաբրիէլ Ավագեանի ոչ մի թղթիկը այրուած չէ էջմիածնում» նրանց ստացված օրից ցայտմա:

Ես ինձ համար սուրբ պարտք համարեցի մեր էջմիածնայ, մեր Վենափառ Կաթողիկոսի և Աթոռի արարանների վրայից գէթ մի արտա մաքրել, որով անխոհեմ մարդիկ աշխատում են աղտեղել հայրուստ այսպիսի ձգնաժամին, ուր հաշտութեան միութիւնն և փոխադարձ ներողութիւնն ամենահարկաւոր պայմաններն էին:

Ամենախնայարար ինչդուր եմ մեր միջապատիւ լրագրագետներին այս տողերս ամբողջապէս արտաւազել իրանց հրատարակած լրագիրներում, ի միասնութիւն ժողովրդին և յարգարացումն բամբասված անմեղներին:

Ախլիկ

ՆԱՄԱԿ ՀՈՒՇՈՒՑ

Օգոստոսի 1-ին

Ներամապահութիւնը, որ գլխաւոր պարտաւորութիւնն է Գարաբաղի չըջակալ բազմաթիւ գիւղերում, մանաւանդ Աղտաթի, Աղդաշի, Կեօկաշի և Աղջապատու գիւղերումն, չը նայելով որ առհասարակ ըստ մեծի մասին ժողովուրդը պարտաւոր է այդ արհեստով, դեռ ևս այնքան կատարաւորագործված չէ, ինչքան հարկն է. չերամբերի պահելու տեղերը գլխաւորապէս ծածկոցներ չունենալու առթիւ մեծ վնասներ կրում են յաճախ անձրևներից, ինչպէս ներկայ տարւումս պատահեց. երկարատև և անընդհատ անձրևները գրեթէ բոլորովին փչացրին բերքերը. ինքն չերամապահութեան արհեստը այնքան լաւ կատարելագործված չէ այդ տեղերում, այդ հասկանալի է, որովհետեւ բացի այն, որ ժողովրդի մեծ մասը գաղց տարվան համար չէ պատրաստում իր բոժոժից լաւ սերմեր, այլ նա գնում է այդ Շուշուց (ուր ստացվում են օտար տեղերից). նրան յայտնի չէ այն բոլոր կանոնները, որոնք հարկաւոր են չերամապահութեան համար. այդ արհեստով ըստ մեծի մասամբ պարտաւոր է գիւղացի թուրք ազգաբնակիչները. թողնելով այդ, մենք կը ցանկանայք մի երկու պատկեր նկարագրել այն վաճառականների համար, որոնք պարտաւոր են այդ առուուտուրով: Այդ առուուտուրով պարտաւոր մինչև 72 թիւը շատ քիչ մարդիկ գտնվում էին Շուշում, բայց այդ միջոցից սկսած օրըստօրէ դրանց թիւը աւելանում է. Շուշում և իր շրջակայ գիւղերում 15-ի չափ մեծաքանակ գործարաններ կան:

Բոժոժաբաղը սկսվում է յունիս ամսի սկզբներում, և չարունակվում է մինչև 15 օր. բայց թէ ինչ անկարգութիւններ առնա օր չեն պատահում իւրաքանչիւր տարի այդ կողմերում բոժոժ առնող վաճառականների մէջ:

Անցեալ տարի վերջապէս ցանկանալով վերջ դնել այդ անկարգութեանը, այդ առուուտուրով պարտաւոր չուչեցի վաճառականները հաւաքելով միասին պայման կապեցին առանց գնելը բարձրացնելուն զին և իրենց դաշնակցութեան համեմատ բաժանել. ամենն էլ ընդունեցին՝ երկու օրից յետ լսում ենք, որ դաշնակցութիւնը քանդուած է, ամեն մարդ ըստ իր կամաց սկսում է առնել: Երկարով մի փոքր յաջողութեան նշաններ յետին գիւղերումն էլ մի երկու հարկուր րուրի ձեռք գրեցելով, վաղ տուեց Աղտաթ՝ մինք միւսին հակառակ վերջապէս գնելը բարձրացրին 10-ից մինչև 18-ը, բայց այդպիսի մի անխոհեմ ընթացքը շատերուն թանկ նստեց:

Չը նայելով անցեալ տարվայ արած շատերի վնասներին, նոյն անկարգութիւնը կրկնվեց և ներկայ տարւումս Որինալի, մի տեղ սկսում են առնել 7 րուրով, և այնպէս էլ չարունակվում է, յանկարծ երևում է մի օր և իցէ աղժախող խաշան և բարձրացնում է մինչև 9 և 10 րուրի և մի 50 րուրու առնելով, զինը բարձրացնելն յետ, ետ է քաշվում. գիւղացիք էլ սկսում են նրանից պակաս չը ծախել և մտածելով որ գուցէ աւելի կը բարձրանայ սկսում են իրենք գորացնել. ինչ պիտի անի ուրեմն գործարանատէրը, նա անպատճառ իր գործարանը չի կապի և ահա նա ստիպված է լինում ինչ գնով և իցէ առնել:

Մենք ներկայ էինք մի տեսարանի, Տոգ գիւղում Հայրունանցի գործակատարները սկսում են առնել նոյն գնով, այսինքն 7 րուրի. յանկարծ նոյն տեղն է գալիս պ. Ա. Մշունեանց և չուղելով թողել որ նրանք առնել կարողանան, զինը բարձրացնում է մինչև 15 րուրին: Տեղացիք իրենց բերքերը բերում են նրա մօտ, սակայն կամը չունենալով առնելու տեղացիներից մի լաւ զորս դու պատուիրեցի անելուց յետոյ փախչում է: Ահա մեր վաճառականի միակ իրեալը. թող իմ հարեանի մի աչքը հանեն. վնաս չունի, եթէ ես երկու աչքից էլ կը զրկվիմ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, օգոստոսի 20

Ձեր լրագրի № 144-ի մէջ, շատ անգամվայ պէս քաղաքային վարչութեան ուղարկութիւն էք դարձնում Ս. Կարապետի ձորում չինած սապոնի գործարանից առաջացած զարգահոտութեան մասին, որ գործարանի մօտեցում բնակվողներին միշտ անհանգստութիւն է պատճառում և որ կարող է շատ հիւանդութիւններ առաջացնել:

Բայց, ահա այդ ևս և նոյն տեսակ անհանգստացողութեան մէջ ենք և մենք՝ Բեթղէհեմի թաղում բնակվողներս, նոյն եկեղեցու անմաքրութեան

խողովակի պատառվածքներից դուրս թափվող աղտեղութեան անտանելի և զգուշելի հոտից, իսկ եթէ սովորականից աւելի ստտականում է հոտը, Աստուած իմ, ինչ է լինում նորա չուրջ բնակվողներին դուրս թափել... մարդը չչմում է և քիչ է մնում վայր ընկնի:

Յիշեալ թաղի կեցողները ամեն օր օրհնում են այն անձանց, որոնց սուրբ պարտականութիւնն է այդ և այդպիսի բաների վրա ուղարկութիւն դարձնել. բայց չեն դարձնում:

Եւ միթէ քաղաքային վարչութիւնը իր սովորութեան համեմատ պէտք է տարին տասնեակու ամիս չը լսելու ու չը տեսնելու դէմ թէ խեղճ ժողովրդեան արդարացի ձայնը, թէ տեղական լրագրութեան իրաւացի ակնարկութիւնները և միշտ անհոգ մնալ իրան վրա ստանձնած պարտականութիւնները ճշգրտէն կատարելու մէջ:

Գուցէ շատերը չը հաւատան էլ իմ ասածին, բայց միթէ ստուգելը զժուար է: Փառք Աստուծոյ, որ այդ թաղը քաղաքի մի ուրիշ հեռաւոր թաղերից չէ, իր գիւղով քաղաքի կենտրոնին մօտ է. թող վարչութեան ներկայացուցիչները ստուգեն և ըստ այնմ կարգադրեն, որպէս զի թէ թշուառ մարդիկ ազատվեն այն անտանելի դուրսութիւնից և թէ իրանց խիղճը հանգիստ լինի:

Որքան յիշում եմ հէնց այս մի և նոյն բանի վրա մի քանի անգամ տեղական լրագրութեան մէջ գրվել է և քաղաքային վարչութեան ուղարկութիւնը հրաւիրվել, բայց ցաւք սրտի պէտք է ասել, որ միշտ էլ անուշադրութեան է արուել յիշեալ վարչութեան կողմից: Եւ գուցէ հէնց նիմա էլ դարձեալ ըստ սովորականին ուղարկութիւն դարձնող և կարգադրող չը լինի: Բայց մինչև երբ այդ այդպէս կը շարունակվի:

Լ. Մ. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՆԵՐ

Լօնդոնից շնորհակալութեամբ ստացանք «The Armenians judged by foreigners» (Օտարների դատողութիւններ հայերի մասին) վերնագրով մի տեսարակ. որ հրատարակվել է, ինչպէս ինքն ուղարկողն է բացատրում՝ «Հայոց ազգային բնաւորութեան մասին սըր Վիլֆրիդ Լօսոնի կողմից համայնքների ժողովի մէջ, յուլիսի 23-ին արած խայտառակ նկատողութիւնների առթիւ»։ Վերնագիրը բաւականին պարզում է բովանդակութիւնը: Բայց հարկաւոր եմք համարում աւելացնել, որ հեղինակը ոչ թէ իր խօսքերով է յայտնում ուրիշների կարծիքը մի ամբողջ հայապիտէ մէջ նրանց ամփոփելով, այլ բաւականանում է դանաղան անուանի հեղինակների գրվածքներից բաւազցի վկայութիւններ բերելով:

«Новое Время» լրագիրը տպել է մի շատ հետաքրքիր ֆելիետօն երրորդ րաժնի վերցնելու մասին: Յօդուածի վերջում ֆելիետօնիստը բերում է կոմս Լօրիս-Միլբօրի մի խօսակցութիւն: Կոմսը խօսում է իր գործունէութեան մասին, ասում է թէ ինքն կարող է գործ գործել միմիայն միւս ծառայողների մասնակցութեամբ և աւելացնում է. «Գուցէ ինձ լսում էք և երևի մտածում էք՝ դու, խօս, խորամանկ արմեաշկա ես... Ինչ է ես լինելի ձեր տեղը, և ձեզ այնքան քիչ ճանաչէի, ինչքան դուք ինձ, ես նոյնը կը մտածէի: Դա շատ բնական է առաւ մարդու կողմից: Թէ ես պէտք է խոստովանվիմ, որ կրթութիւնը, ծառայութիւնը և բոլոր թէ նիւթական և թէ բարոյական շահերը, բոլորը, մի խօսքով, արեցին ինձանից մի առաւ մարդ, բայց այնու ամենայնիւ ձեր աչքում ևս հաւեմ: Բայց որովհետեւ ես ծագումը հայ եմ, ես նոյն իսկ այդ պատճառով պարտաւոր եմ այն պաշտօնի մէջ, որի վրա ինձ դրել է կայսրը, աւելի անել, քան թէ բուն առաւ: Ուստի բաւական է այնքան անել, որքան շնորհակալ կը լինեն, իսկ ինձ նոյն շնորհակալութեան արժանաւոր համար հարկաւոր է անել անհամեմատ աւելի շատ: Այդ ես շատ լաւ գիտեմ և միշտ յիշում եմ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանական պաշտօնական լրագիրներից մէկի մէջ տպված է հետեւալ յօդուածը: Գամբելտայի Երրորդի մէջ ասած ձառի առիթով:

Մենք չէինք կամենում խօսել Երրորդի մէջ ասած Գամբելտայի ձառի մասին, մինչև

կանգնեց, թէ արդեօք Կամբուտա ամբողջ
թաւանակալի, թէ իր կողմից էր խօսում: Առա-
ջին պէպքում, մեր հայրենիքի քաղաքականու-
թեան խաղաղութեան որոշ պատճառով կը
հրաժարէինք լուսաւորել Կամբուտայի ծա-
ւառ: Յրանձնական Հանրապետութեան նախա-
նախնի և միակտար Յրէյսինէի արած յայ-
տնութիւնները բազմաթիւ պատճառներով
մեզ, որ Կամբուտա իր ծառով զիւմեց Նե-
պոլիս ոչ թէ Յրանձնայի, այլ անձնականու-
թեան իր կողմից: Արդ՛հետեւ Կամբուտայի ծառը
յարգութեանն է վերաբերում, մենք կը սկսեց
նրան քննել և այդ քննութիւնը կը կապեց
France լրագրի օգոստոսի 16-ի յօդուածի
հետ: Ահա այդ յօդուածի սկիզբը: «Պ.
Կամբուտա իր գեղեցիկ ծառով խօսեց իրա-
ւոյթի, արդարութեան և ապագայի մասին:
Այդ խօսքերը խաղաղութեան յայտնու-
թիւնների հետ խառնուած կապածու Կեր-
մանային բարեկրօնեան խառնակութիւն են
նկարագրում: Կերմանեան կուրութեան է
նկարագրում, որ յատկանշ է իր գանձերի
կա նստած ժառանգ: Հրեանայի այն կողմի
բազմութիւնը կոմիսիան երկուցի են ներթափ-
ւած: Մինչև այժմ մենք կարծում էինք, որ
Կամբուտայի Հանրապետութեան պետական
կողմից, գիտահետազոտ այն փաստը, որ Քը-
րմանային ժողովուրդը պատերազմ չի ցան-
կանայ մինչև ստիպւած չը լինի թշնամու-
թեան: Կրթական կողմից աւելի խաղաղ
մտաւորական կրթութեանը, քան թէ
պարտնեցող և բռնապետները, մանաւանդ
որ Կամբուտա, որ խաղաղութեան, մինչև ան-
գամ խաղաղութիւն խոստացողի անուն է
տալիս: Իսկ եթէ նրա ծառը ցոյց է տալիս,
որ նա հրաժարել է իր այդ գերից և փո-
խել է իր ընթացքը, այդ հանգամանքը Կեր-
մանային մէջ ոչ թէ երկուց, այլ զարմանք
և ափսոսանք յարուցեց: Այնուամենայնիւ
Կերմանայի քաղաքականութիւնը այսուհետեւ
նրան խաղաղութեան կը լինի, որքան և ա-
ռաջ, բայց Կամբուտայի ծառը ծանր հա-
տած առեց խաղաղութեան հաւատին, որ
Թ. Յրանձնայի և թէ Կերմանայի մէջ տըն-
կանութեան առաջադիմութեան հիմունք է
դրում: Թէպէտ այդ հանգամանքի պատճա-
ռով, մեր կարծիքով, դժուարութիւններ չեն
աղի, բայց դա ապացուցանում է, որ պա-
տերազմական կուսակցութիւնը նոյնքան շատ
անբարեկամութեան նշանաւոր անդամներ ունի,
քան և միապետական և չափազանց զար-
մանալի է, որ պատերազմական կուսակցու-
թեանը պատկանում է այնպիսի մեծ ազ-
գայութիւն ունեցող պետական մարդը, ինչ-
պէս պ Կամբուտա: Արդեօք իրաւունք ու-
նի պ. Կամբուտա հիմնով արդարութեան
հետ: Այստեղ կը յիշեցնենք, որ Նիմֆիզենի
Թ. յովիկի խաղաղական դաշնագրիները կա-
պում ժամանակ գերմանացիները նոյնքան
զոհոված էին այն ժամանակ, որքան այժմ
գերմանացիները: Այդ վրդովմունքը անցեալ
դարի ընթացքում աւելի է սաստկացաւ: Քը-
րմանային նուաճողների կողմադրութեան պա-
տաւոր: Կերմանային ժողովուրդը այն ժա-
նակ ոչ թէ միայն իրար էր սպառնա-
լով խնդրական արդարութեանը, այլ առաջ-
նորմութիւնները երկրորդական տեղ ստա-
նալ նստողէն: Ի-ի նուաճումներով, որ ըն-
դանակեց Յրանձնային մինչև Լիւբեկ: Իր ան-
գիտ արդարութեան անունով պ. Կամ-
բուտան կարող էր Էլբայի բերանը և Լիւբե-
կ պահանջել, ինչպէս նա այժմ Էլբաս-Լո-
պոլիզեան պահանջում է: Եթէ հանրապե-
տական Յրանձնային, Կամբուտայից առաջնորդ-
ած, պատրաստ է այն քաղաքական աւան-
դութիւններին հետևել, որին հետևում էր
պատերազմական Յրանձնային Լիւբեկի XIV
և Լիւբեկի I-ի և III-ի ժամանակ,
մենք տարաբաղադար մենք պէտք է հաշ-
վենք այն մտքի հետ, որ արեւմտեան սահ-
մանների վրա խաղաղութիւնը ապահով չէ:

Երկու ազգութիւնները խաղաղութեան մեծա-
մասնութիւնը պէտք է իմանայ, թէ ամենքի
համար ցանկալի խաղաղութեանը օվ է ըս-
պանում: Կերմանային իր ազգային քաղա-
քականութեանը անդադար կապացուցանել,
թէ ինքը խաղաղութիւն է ցանկանում և ա-
տում է պատերազմը: Մենք ուրախութեամբ
կարող ենք յայտնել, որ տաս տարիների ըն-
թացքում, այն ժամանակակից, երբ գերմա-
նական ազգային միութիւնը կայացաւ, մեր
խաղաղութեան քաղաքականութիւնը աշոյ էր,
որովհետեւ այժմ այլ ևս ոչ ոք չէ հաւա-
տում այն բանաստեղծներին, իբր թէ Յրան-
ձնայի նման Կերմանային նուաճող գիտաւո-
րութիւններ ունի: Մենք ցատում ենք, որ
ինչպէս երբեք հարեւր տարի առաջ, նոյնպէս
և այժմ մեր զբաղմունքի մէջ տիրապետող
պատերազմական ոգին ստիպում է մեզ մեր
ապահովութիւնը ուժեղ և պատերազմի հա-
մար պատրաստ զօրքերը համարել: Կրանից
մեծ ապահովութիւն մենք չենք փնտրում և
հաւատացած ե՛ք, որ այդ ապահովութիւնը
անպատճառ ձեռք կը բերենք:

«ГОЛОСЪ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱՅՈՒՅԻՆԵՐ

«ГОЛОСЪ» լրագրի մէջ երգրումից տպւած
է մի թղթակցութիւն, որի մէջ ի միջի
սլոյց տպւած է հետևեալը:
«Պ. Պոլսոյ լինելով, ես լսեցի անհամարա-
կան կարծիքներ երգրումի ուսուց հիւպա-
տոսի մասին: Կրա պատճառները ինձ անյայտ
էին այն ժամանակ, անյայտ են և այժմ:
Այնուամենայնիւ հարկաւոր եմ համարում
առաջ բերել այն բոլորը, ինչ որ խօսում
են այստեղ ուսուց հիւպատոսի մասին:
Ամենից առաջ ասում են, որ ուսուսական
հիւպատոսը անպիսական, Ֆրանսիական և
մինչև անգամ պարսկական հիւպատոսների
վարմունքի հակառակ, բոլորովին չէ զբաղ-
ւում քաղաքականութեամբ: Նա զբաղւում
է միայն ուսուսականների անցագրիներ
տալով և վերանորոգելով, և բոլորովին
չէ դուրս գալիս այն շրջանից, որ վերա-
բերւում է առևտրական շահերին: Իսկ ե-
թէ ստիպւած է լինում մի բանի մէջ
խառնվել, նա շատ օտարաբի կերպով է վար-
ւում: Որևիտե, անցեալ տարի, երբ մի պար-
սիկ բռնաբարեց հայ օրիորդի և այդ պատ-
ճառով հայերի և պարսիկների մէջ արեւնա-
հեղ կռիւ պատահեց, ուսուսաց զխաւոր
հիւպատոսը կողմնապահ զանկեցաւ դէպի
պարսիկները, որոնք հրաժարվեցան հայերին
բաւականութիւն տալ: Մի ուրիշ անգամ
երբ մի հին գերեզմանատան հարցի պատճա-
ռով, լոյները և հայերը զիմեցին ուսուսաց
հիւպատոսի միջնորդութեանը, նա այնպիսի
սահմանադիմ անցկացրեց, որ մինչև ան-
գամ թիւրքաց վարչութիւնը բողոքեց զրա
դէմ: Վերջապէս երբ երկրի մէջ սով սկսվե-
ցաւ, երբ պետութիւնների ներկայացուցիչ-
ները օգնում էին ազգաբնակութեանը թէ
քաջալիրով խօսքերով և թէ օգնութիւն
խնդրով իրանց կառավարութիւններից:
Ուսուսաց հիւպատոսը բնակիչներից ոչ մէկին
մի միութարական խօսք անգամ չտաց: Այդ-
պիսի անբարեկամութիւնների առթիւների
մասին այստեղ (Երգրումի մէջ) ես շատ եմ
լսել և նրանց անուշադիր չեմ կարող թող-
նել: Պէտք է յուսաւ, որ այդպիսի իրողու-
թիւններ այլ ևս չեն կրկնվի:
—Ուսուսաց զխաւոր հիւպատոսը, ասաց ինձ
հայերի հովիւ Օրմանեան եպիսկոպոսը, գեռ-
ինձ մօտ չէ եղել, բայց ես յոյս ունեմ, որ
նրան իմ տանը շատ կը տեսնեմ: Նա մտա-
գիր եմ նրա հետ բացարձակ խօսել: Իմ
նախորդի ժամանակ հաստատուած զօրծերի
զրուցութեան և փոխադարձ յարաբերութիւն-
ները այլ ևս չեն կարող շարունակվել: Նա
ցանկանում եմ, որ ուսուսաց հիւպատոսը Ե-
րգրումի մէջ ոչ թէ անտարբեր հիւր լինի,

այլ օտար պետութիւնների ներկայացուցիչ-
ներին ամենագործունեան: Ուրիշ կերպ չի
էլ կարող լինել, որովհետեւ հայերի շահերը
ամենից շատ առևտրական շահերն են շոշա-
փում: Ուսուսատանը տուեց մեզ Բերլինի դաշ-
նագրի 61-դ յօդուածը. Ուսուսատանի ներ-
կայացուցիչը այդ պատճառով պէտք է ամե-
նամեծ ժողովրդականութիւն ունենայ հայ-
կական նահանգների զխաւոր կենտրոնի մէջ,
մինչդեռ նախկին սխալների պատճառով մի
ուրիշն է ստացել առաջին տեղը ժողովրդա-
կան համակրութեան կողմից և ամբողջ վրա
ունեցած ազդեցութեամբ: Նա ցատում եմ
զրա մասին և ցանկանում եմ, որ ուսուսաց
հիւպատոսը բոլորովին այլ յարաբերութիւն-
ներ ունենայ իմ հայրենակիցների հետ:

Երգրումի վիլայեթի նոր առաջնորդը չա-
փազանց նշանաւոր անձնաւորութիւն է:
Նա իր ուսումը վերջացրել է խալիպան
համալսարաններից մէկի մէջ և երկու բաժին-
ներից գլխավոր աստիճաններ է ստացել:
Նա իրաւաբանութեան և աստուածաբանու-
թեան դոկտոր է: Կաթոլիկ ծնվելով, նա
միշտ եռանդոտ և Հայաստանի վերածարման
մասին երողող ազգասէր է եղել: Ցանկանա-
լով աւելի գործնականապէս մասնակցել իր
ազգային գործին, ուսում վերջացրելուց յետոյ
նա վարդապետական կոչում բնութենց և
երկերի Անտոնի կարգիկների հրաւիրմամբ
սկսեց այս վերջինի մասնաւոր քարտուղարի
պաշտօնը վարել: Կրանով նա կամենում էր
ազգիկ Հայաստանի մէջ ընդհանր իր եղբայր-
ների վրա, որտեղ կաթոլիկ կրօնի հետևորդ-
ները հարեւր հազարներով կան: Բայց այդ
ձգտմանը վիճակված չէր օգնովի, պատկան
անխալաքանութիւնը յայտնելուց յետոյ, Ու-
մանեան լուսաւորված վարդապետը ոչ թէ
միայն չը կամեցաւ սկիզբաւոր պաշտպանը
հանդիսանալ, այլ առաջնորդ դարձաւ այն
հայ-կաթոլիկների, որոնք մեծեցին պապի
այդ շրջաբերականը: Կրանից յետոյ հայ-
կաթոլիկների մէջ սարսափելի կռիւ սկսվեց,
որ վերջացաւ ապստամբ հայերի յաղթու-
թեամբ, որովհետեւ թիւրքաց կառավարու-
թիւնը նրանց պաշտօնապէս իրաւունք տուեց
Թիւրքիայի մէջ եղած հայ-կաթոլիկական
եկեղեցական կալուածները անօրինելու հա-
մար: Հռոմէական կուրիայի և Ֆրանսիական
գեղական պ. Պարիսիէի ջանքերով Կ. Պոլսի մէջ
անցեալ տարի կատարված յանկարծակի փո-
փոխութիւնների պատճառով հայ-կաթոլի-
կիկների զուլնն անցաւ պապական անխալա-
քանութեան ամենահաւատարմ արքանակ
քաղաքացի Հատուր: Այդ փոփոխութիւնը
վերջնականապէս ոչնչացրեց բազմաթիւ հայ-
կաթոլիկների և պապական գահի մէջ եղած
կապը: Մի քանի հազար հայ-կաթոլիկ տ-
նուանի ընտանիքները, իրանց սիրելի Օրմա-
նեան վարդապետի յորդաններից զրգոված, ան-
ցան հայ-լուսաւորական եկեղեցու գիրկը,
իսկ ինքը Օրմանեանը առաջինը ընդունեց
հայերից պաշտած Ներսէս պատրիարքի օր-
հոյութիւնը: Օրմանեանի ծառայութիւնները
գնահատելու համար Ներսէս պատրիարքը
նրան Հայաստանի առաջին վիճակի առաջ-
նորդի տեղը յանձնեց:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Լրագրիների մէջ կարդում ենք հետևեալ
թղթակցութիւնը Սթէնբլիցից:
Իմ նամակներից մէկի մէջ ես հայտարարել
էի, որ ժողովուրդը մեծ ուրախութեամբ
ընդունեց զօրքերի կազմակերպելու մասին
տուած հրամանը: Յունաստանի ամեն կող-
մերից ստացված լուրերից երևում է, որ ժո-
ղովրդի եռանդը չէ՛ ստուկ և որ նա բո-
լոր ոյժերով աշխատում է որքան կարելի է
շուտ կազմակերպել իր զօրքերը: Յունիսի
սկզբին յունական զօրքերի թիւը հասնում
էր 10,000-ի, իսկ օգոստոսի առաջին օրե-
րում այդ թիւը 20,000 հասաւ: Օգոստոսի

վերջին երեւի նա 40,000 կը հասնի: Զօրքերի
թիւի այդպիսի արագ մեծանալը մեկնաւոր է
այն պատրաստութեանը, որով գինուրա-
կան ծառայութեանը կից արեւելեան երկուս-
տարեկերը շտապում են գինուր գրվել: Երկ-
աւարդներից շատերը, որոնք յ1 տարեկան
հասակի չեն հասել, նրանց թիւում և առե-
տրական միջնորդի ուղին, շտապում են
կամաւորներ գրվել: Ամեն օր միջին թիւով
500 գինուր են ընդունում: Կառավարու-
թիւնը պատուիրեց 16 հատ կրուպի թիւրա-
նօթներ պատրաստել, որոնք սկսեցին թիւի
28-ին պատրաստ պէտք է լինեն: Ներքին
գործերի միջնորդը հրամայել է անցագրիներ
չը տալ այն մարդկերանց, որոնք գինուրական
ծառայութեան են ենթարկված, իսկ շուկ-
նաւների վարչութիւններին հրամայված է
անցագիր չունեցողներին Յունաստանից չը
դուրս տանել առանց հրամանի:

Յունաստանի պատերազմական պատրաս-
տութիւններից երեւում է, որ յունական
կառավարութիւնը վճռել է թիւը չը տալ
Թիւրքիային, որ նա ծագրի Ներսայի վճռը:
Ելալայի մէջ լաւ իմանում են, թէ ինչ նը-
շանակութիւն ունեն Թիւրքիայի պատերազ-
մական պատրաստութիւնները: Թիւրքաւոր
թղթակցիների տարածած լուրերը թիւրքաց
զօրքերի կենտրոնացելու մասին չեն կարող
փախցնել յայն ժողովուրդին, որ շատ լաւ
ճանօթ է թիւրքի քաջութեան հետ և
թղթակցներից լաւ կարող է գնահատել իր
սեփական ոյժերը: Եթէ Թիւրքիան չէ հա-
կանում, որ նա չը պէտք է ընդգրկմանայ Եր-
կին կենտրոնացիայի վճռին, նա փոխարե-
ն յայն շատ լաւ հասկանում են, որ այժմ
ամենապարտաւոր պատերազմ յայտնե-
լու համար Թիւրքիային, որ վերջին ուս-
թիւրքական կռիւց յետոյ ամենագործուն
զրուցեան մէջ է: Այդ կարծիքի են բոլոր
յոյները և այդ հանգամանքը ազգաբնակու-
թեան մէջ պահպանում է պատերազմական
ոգին:

Թիւրքիայից ստացված են հետևեալ տե-
ղեկութիւնները: Թիւրքիան պատրաստվում է
պատերազմի համար: Բոլոր ամրոցները պա-
շարներով լցվում են: Ազգային լիւսնիկ բար-
ձրակարգների վրա կերտւում լինված չօր
փայտեր են դարձված, որպէս զի հարկաւոր
դէպքում նրանց կրակ արդի, պատերազմի
նշան տալու համար: Այստեղի գանձարանների
մէջ փող չը կայ: Սթիցիները ուժեղ չը
ստանալով պատուիւմ հազարաւոր ունեն և
օրերով քաղցած են մնում: Թէ գինուրները
և թէ օթիցիները արամադրված չեն պա-
տերազմելու, թէպէտ նրանցից մի քանիսը
ասում են, որ եթէ պատերազմը լինի նրանք
կամ կը սպանվեն և այդպիսով կազապեն
այժմեան թշուառ վիճակից, կամ կը յաղթեն և
կողոպտելով Յունաստանը, իրանց հայրենիքը
հարուստ կը վերադառնան: Կապալաւորները
զօրքերին պաշարներ չեն հասցնում: Ձի-
նուրները զիւրերի բնակիչներին խլում են
նրանց ուսմանները: Առեւտուրը Թիւրքիա-
յում ընկած զրուցեան մէջ է: Բայց այդ
երկրի մէջ անասունների հիւանդութիւն է
տարածված: Մի ամիս քանից առաջ Կարի-
սայի մահմեդական բնակիչները համաձայ-
նել էին մի զիշերկայ մէջ կոտորել քաղաքի
բոլոր քրիստոնեաներին: Բաղդադական մար-
դասէր մուշաֆին նրանց այդ բանը թղթ
չէր տուել: Եթէ յունական զօրքերը չը շտա-
պեն գրաւել Թիւրքիա, այստեղ կարող են
սարսափել անցքեր պատահել:

«Standard» լրագրին Աթէնքից գրում են:
Յունական գինուրական միջնորդը ընդու-
նել է իր մօտ 35-ի չափ թիւրք օթիցի-
ներ, որոնք եկել էին նրանից պարագմունք
խնդրելու համար: Կրանք թիւրքաց կայսե-
րութեան գանազան տղերից են: Ծառերը
յունական սահմանների վրա են թափա-
ռում: Այդ ողորմելիները ոչ թէ դաւաճա-
նել են իրանց զրօշակին, այլ միջոցներ չեն
ունեցել ապրելու համար: Ձիւնուրական վա-
չութիւնը հաւատացած է, որ թիւրքաց
շատ գինուրներ և օթիցիներ յայնի կողմը
կանգնեն: Այրանցի հայրենաւորները նոյնպէս
առաջարկում են իրանց ծառայութիւնները:
Յունաստանը կարող է կառավարել թիւրք
գինուրականներին և եթէ նա այդ բանը
չանի, կը նշանակի աւելորդ և համարում:
Եթէ հաստատեք փախստական թիւրք օթի-
ցիներին, նրանց բոլոր ընկերներն էլ մտա-
գիր են նոյն բանն անել, եթէ յունական
կառավարութիւնը կը համաձայնի ապահա-
վել նրանց ուժերը և ստորմանը:

Խորագիր—հրատարակող Գ.Ի.Գ.ՈՐ ԱՐՄԱՐՈՒՄԻ

